ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ,
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ք. ԵՂԵԳՆԱՁՈՐ ՇԱՀՈՒՄՅԱՆ
հեռ. 0281- 23069

РА Марз Вайоц дзор г. Ехегнадзор 3601
ул. Шаумяна 5 тел. +374028123069

02.05.2017թ.

Նո. Շ-267

# ՏԵՂԵԿԱՆՔ

## ՀՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՋԵՐՄՈՒԿԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏԻ ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ՍԱՏԳ_ՈՒՄ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ՏԿՅԱԼՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Արձանագրության 1.1 կետով նշված 34.0 հազար դրամը ամբողջությամբ վերականգնված է քաղաքացու կողմից:

2.Արձանագրության 1.2 կետով նշված խախտումն ներկայացվել է սոցիալական աջակցության Եղեգնաձորի տարածաշրջանի խորհրդի վերաքննարկմանը: Եղեգնաձորի սոցիալական աջակցության խորհրդի 2016թ. մայիսի 30-ի թիվ 5 արձանագրության 3-րդ կետի որոշմամբ որոշվել է անփոփոխ թողնելու Եղեգնաձորի սոցիալական աջակցության խորհրդի 2015թ. մայիս և 2015թ. հուլիս ամիսներին կայացրած որոշումները:

3.Արձանագրության 6-րդ կետով նշված 22.5 հազար դրամը ամբողջությամբ վերականգնված է քաղաքացու կողմից:

Պետ Հ. Դավթյան

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ,
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ք. ԵՂԵԳՆԱՁՈՐ ՇԱՀՈՒՄՅԱՆ
հեռ. 0281- 23069

РА Марз Вайоц дзор г. Ехегнадзор 3601
ул. Шаумяна 5 тел. +374028123069

18.05.2016թ.

**Եղեգնաձորի սոցիալական**
**Աջակցության խորհրդի նախագահ՝**
**Պ-ն Խ. Գևորգյանին**

**Հայտնում եմ Ձեզ, որ Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի կողմից 2016թ. Ապրիլի 1-ին կազմված միջանկյան արձանագրության 5-րդ կետում արձանագրվել է՝**

„ Ուսումնասիրվել է նպաստառու ընտանիքի անդամների՝անշարժ գույք ձեռք բերելու փաստերը և դրանց հանգամանքները, ինչպես նաև դրանց համապատասխանությունը ՀՀ կառավարության անշարժ գույքի կադաստրի կողմից տրամադրված նպաստառու ընտանիքների վերաբերյալ տեղեկատվությունը: Ուսումնասիրությունից պարզվեց, որ 2 դեպքով խախտվել է ՀՀ կառավարության 30.01.2014թ. հ.145-Ն որոշման՝ ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառվելու (փաստագրվելու) կարգի 51-րդ կետի և 17 -րդ կետերի պահանջները, այսինքն բացակայում է խորհրդի պատշաճ հիմնավորված առաջարկությունը:

Այսպիսով, հայտնաբերվել են **2** խախտումներ, որոնց արդյունքում վճարված գումարի հաշվարկը կազմում է **588,0 հազ.դրամ**, իսկ ավել վճարված գումարը կազմում է **588,0 հազ. դրամ** (տես հավելված 3)՝

Խնդրում եմ աջակցության խորհրդում քննարկել վերոհիշյալ հարցը և ընդունել համապատասխան որոշում:

Պ ե տ՝ Հ. Դավթյան

Առարկություն

**Վերահսկիչ պալատի խորհրդի 2016 թվականի փետրվարի 5-ի թիվ 4/3 որոշման հիման վրա իրականացվող վերահսկողության արդյունքներով կազմված միջանկյալ արձանագրության մեջ ամրագրված խախտումների վերաբերյալ**

**2.ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տեղեկատվության հիման վրա (գույքի ձեռք բերում) հայտնաբերված խախտումների վերաբերյալ/հավելված 3/**

Վերահսկման արդյունքում արձանագրվել է՝

Ուսումնասիրվել է նպաստառու ընտանիքների անդամների՝անշարժ գույք ձեռք բերելու փաստերը և դրանց հանգամանքները, ինչպես նաև դրանց համապատասխանությունը ՀՀ կառավարության անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից տրամադրված նպաստառու ընտանիքների վերաբերյալ տեղեկատվությանը:

Այսպիսով, հայտնաբերվել են 2 խախտումներ, որոնց արդյունքում վճարված գումարի հաշվարկը կազմում է **588.0 հազ.դրամ**, իսկ ավել վճարված գումարը կազմում է **588.0 հազ. դրամ** (տես հավելված 3)՝ " Պետական նպաստների մասին" ՀՀ օրենքի գլուխ 9, հոդված 37, 1 և 2 կետերի համաձայն:

2.1 Առարկություն այդ մասով՝

2.1.1 Համաձայն ՀՀ կառավարության 2014թ.-ի հունվարի 30-ի նո. 145- ն որոշմամբ հաստատված ,,Ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառվելու /փաստագրվելու/ կարգի 17-րդ կետի՝

17. Ընտանիքի անդամներից որևէ մեկի՝ անշարժ գույքի սեփականության իրավունք ձեռք բերելու հանգամանքն ամրագրվում է «Կ ծածկագրով, որը կարող է չամրագրվել, եթե առկա են խորհրդի պատշաճ հիմնավորված առաջարկությունը դրա մասին և տարածքային կենտրոնի կազմակերպած տնային այցելության ընթացքում կատարված ուսումնասիրության մասին արձանագրությունը:

Արձանագրված բոլոր դեպքերի համար էլ առկա է վերոհիշյալ կարգով սահմանված ընթացակարգը: Բոլոր դեպքերում էլ քաղաքացիների կողմից ձեռք են բերվել հողեր, որոնց կադաստրային զուտ եկամուտի արժեքները մուտքագրվել են: Ոչ մի դեպքում ընտանիքի կարիքավորության միավորը չի իջել սահմանային միավորից:

Արձանագրված երկու դեպքում էլ ոչ մի տեսակի շինարարական աշխատանքներ չի իրականացվել, ձեռք բերված հողամասերում:

Եղեգնաձորի ՍԱՏԳ-ի պետ՝ Հ. Դավթյան

# Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ե ղ ե գ ն ա ձ ո ր ի սոցիալական աջակցության խորհրդի
համայնքի անվանումը

**թ ի վ 5** կայաացած 2016 թվականի Մայիսի 30-ին

Օրակարգում

1. Միևնույն բնակարանում առանձին տնտեսություն վարող ընտանիքների ցուցակների քննարկում:
2. Դիմումների քննարկում
3. 2015 թվականի մայիս և հուլիս ամիսների աջակցության խորհրդի կողմից 1-ին կետով կայացված որոշման վերաքննարկում:

Ե ղ ե գ ն ա ձ ո ր ի սոցիալական աջակցության խորհուրդը որոշում է՝

1.Հաշվի առնելով քաղաքացիների կողմից ներկայացված դիմումները և ստեղծված հանձնաժողովների կողմից կատարված ուսումնասիրության արդյունքները, առաջարկել սոցիալական աջակցության տարածքային գործակալությանը համաձայն կից ներկայացված ցուցակի ընտանիքների միևնույն հասցեում հաշվառել առանձին սոց. անձնագրով /թվով 12 ընտանիք ցուցակը կցվում է/:

2.1.Հաշվի առնելով քաղաքացիների կողմից ներկայացված դիմումները և ստեղծված հանձնաժողովների կողմից կատարված ուսումնասիրության արդյունքները, առաջարկել սոցիալական աջակցության տարածքային գործակալությանը Արփի համայնքի բնակիչ՝ Շավարշ Գրիգորյանի ընտանիքի բնակարանային պայմանների համար կիրառել 05 կողը

2.2Հաշվի առնելով քաղաքացիների կողմից ներկայացված դիմումները և ստեղծված հանձնաժողովների կողմից կատարված ուսումնասիրության արդյունքները, և հիմք ընդունելով ,,Պետական նպաստների մասին" ՀՀ օրենքի 37 հոդվածի 3-րդ կետի , առաջարկել սոցիալական աջակցության տարածքային գործակալությանը, քաղաքացիների կողմից պետությանը պատճառած վնասներից մարել համաձայն հաստատված աղյուսակի/ / կցվում է աղյուսակը/:

3.Առաջարկել սոցիալական աջակցության տարածքային գործակալությանը անփոփոխ թողնելու 2015թ. մայիս և 2015 թ. հուլիս ամիսներին կայացրած որոշումները:

Խորհրդի նախագահ՝ Գեվորգյան Խ.

Խ ո ր հ ու ր դ ի ա ն դ ա մ ն ե ր՝

1.Քոչարյան Անայլա

2. Սահակյան ժիրայր

3. Սուրադյան Անուշ

4.Հովհաննիսյան Նեկտար

5.Սարգսյան Էմանուել

6.Հարությունյան Գայանե